

## Բանավոր բաժին

### Համանմանություններ

Այս կարգի հանձնարարություններում մուգ տառատեսակով առանձնացված է երկու բառ, որոնց նշանակությունների միջև գոյություն ունի որոշակի հարաբերակցություն: Մահմանեք, թե ի՞նչպիսին է այդ հարաբերակցությունը:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակում նույնպես տրված է նշանակությամբ փոխկապակցված բառերի զույգ: Ընտրեք դրանցից այն զույգը, որտեղ բառերի նշանակությունների միջև հարաբերակցությունը ընդգծված բառերի փոխհարաբերակցության նման է (համանմանություն է): Պատասխանը ընտրելիս հաշվի առեք զույգերում բառերի հերթականությունը:

#### **1. հոտոտում . բուրմունք**

- (ա) կռահում . բնագո
- (բ) լսողություն . մեղեդի
- (գ) տեսողություն . պատրանք
- (դ) ինտելեկտ . էրուդիցիա

#### **2. փեթակ . մեղր**

- (ա) նստավայր . աշխատասենյակ
- (բ) արխիվ . փաստաթուղթ
- (գ) ամբար . այլուր
- (դ) մառան . գինի

#### **3. խորհրդանիշ . պայմանական**

- (ա) հատված . ոչլրիվ
- (բ) վարիացիա . անփոփոխ
- (գ) հիմնախնդիր . վճռված
- (դ) հուշակոթող . մոռացված

#### **4. հոսք . ամբարտակ**

- (ա) ռիթմ . պաուզա
- (բ) պայքար . վահան
- (գ) երթևեկություն . արգելակ
- (դ) բարձրություն . բազրիք

#### **5. գեղարվեստական միջոց . մակդիր**

- (ա) կայմ . առագաստ
- (բ) սնդուկ . զարդատուփ
- (գ) լուսատու . մոլորակ
- (դ) բույս . եղեգն

**6. ձագար . կոն**

- (ա) աստղ . եռանկյուն
- (բ) հորիզոն . գիծ
- (գ) շախմատ . ֆիգուր
- (դ) դամբարան . բուրգ

**7. գրահ . սկաֆանդր**

- (ա) առակ . նովել
- (բ) բիբ . աչք
- (գ) բողբոջ . ծաղիկ
- (դ) վտակ . գետաբերան

**8. վակուում . լիքը**

- (ա) ապակի . փխրուն
- (բ) անդունդ . խորը
- (գ) գոլորշի . չոր
- (դ) հրաբուխ . հանգած

**9. տեսակ . բազմատեսակություն**

- (ա) հնչյուն . բարեհնչյունություն
- (բ) գույն . սպեկտր
- (գ) հիերոգլիֆ . այբուբեն
- (դ) կարծիք . կոնսենսուս

**Նախադասության լրացում**

*Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բացթողնված բառերը նախադասությունում նշված են գծերով: Մեկ գիծը երբեմն ի նկատի ունի մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի:*

*Ենթադրական պատասխանի յուրաքանչյուր տարբերակ բովանդակում է բառերի խումբ, որոնց մասերը միմյանցից շեղ գծերով (/) են անջատված: Ընտրեք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր բաժինը հերթականությամբ մտցնելով համապատասխան բացթողնված տեղերում, կտա իմաստային պարզորոշ նախադասություն:*

**10.** Որոշ բույսերի տերևներ, արևի մայր մտնելուց առաջ, թառամում են և կախ ընկնում, իսկ արևի դուրս գալուն պես բացվում և ուղղվում են: ----- Եթե այս բույսերին, արևից մեկուսացնելով, տեղադրենք լրիվ մթության մեջ, նրանք ----- կկարողանան -----, այսինքն՝ բնական միջավայրում գտնվող ----- «վարվել»:

- (ա) տարօրինակ է, սակայն / այնուամենայնիվ / երկնքում արևի տեղադրությունը «որոշել» / բույսերի նման
- (բ) տարօրինակ է, սակայն / չեն / տերևները թառամել կամ ուղղել / բույսերից տարբերվող չեն
- (գ) բնական է, / այնուամենայնիվ / տերևները թառամել կամ ուղղել / բույսերից տարբերվող
- (դ) բնական է, / չեն / երկնքում արևի տեղադրությունը «որոշել» / բույսերի նման

**11.** Այնպես, ինչպես բոլոր նրա ժամանակակից մեծ մտածողները, Մոնտեսկիեն էլ ռացիոնալիստ է: Այդ տեսակետից նա ----- մտածողների տեսքով, որոնք ----- , որ պետությունը կառուցված լիներ ռացիոնալիզմի սկզբունքներով: ----- XVIII դարի Եվրոպայի համար հարցին նման մոտեցումը ----- հանդիսացավ:

- (ա) հեռավոր նախորդներ էլ ուներ անտիկ ժամանակաշրջանի / հակադրվում էին այն բանին / ճիշտ այդ պատճառով / արդեն անցած փուլ
- (բ) հետևողներ էլ ուներ XIX դարի / հակադրվում էին այն բանին / սակայն / այնուամենայնիվ նոր
- (գ) հեռավոր նախորդներ էլ ուներ անտիկ ժամանակաշրջանի / պահանջում էին / սակայն / այնուամենայնիվ նոր
- (դ) հետևողներ էլ ուներ XIX դարի / պահանջում էին / ճիշտ այդ պատճառով / արդեն անցած փուլ

**12.** Արվեստի ստեղծագործությունները ----- , տարբեր դարաշրջանում դրանցում նոր և նոր իմաստներ ----- և արվեստի հավերժականությունն էլ ----- կլիներ: Մի թե «Տիրամայր» - ում Ռաֆայելի ժամանակ ----- , ինչ-որ մենք:

- (ա) մեկ իմաստ էթե չունենային / կրնկալեին / անհնարին / նույնն էին տեսնում
- (բ) բազմատեսակ իմաստ էթե ունենային / չէր ընկալվի / նվաճված / նույնը չէին տեսնում
- (գ) մեկ իմաստ էթե ունենային / չէին ընկալվի / անհնար / նույնն էին տեսնում
- (դ) բազմատեսակ իմաստ էթե չունենային / կրնկալվի / նվաճված / նույնը չէին տեսնում

**13.** Տարբեր աշխարհագրական տարածքում տարածված կենդանիների միջև նմանությունը, ինչպես նաև տարբերությունը, ----- կլիմայական և այլ ֆիզիկական պայմաններով: ----- հարավ-արևելյան Ասիայի և Հարավային Ամերիկայի արևադարձային գոտիները բնական պայմանների տեսակետից ----- ֆաունան ----- :

- (ա) լրիվությամբ բացատրվում է / իրավամբ / միանգամայն տարբերվող են, իսկ / չափից դուրս նման է
- (բ) լրիվությամբ չի բացատրվում / իրավամբ, / զարմանալիորեն նման են, իսկ / ակնհայտ տարբեր է
- (գ) լրիվությամբ բացատրվում է / չնայած այն բանին, որ / ոչնչով չեն տարբերվում, / ակնհայտ միատեսակ չեն
- (դ) լրիվությամբ չի բացատրվում / չնայած այն բանին, որ / զարմանալիորեն նման են, / միանգամայն միատեսակ է

## **Տրամաբանություն**

*Այս հանձնարարությունները միմյանցից տարբերվում են նախնական տվյալների և կատարվելիք որոշումների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրեք հարցերին, որոնք կցված են յուրաքանչյուր հանձնարարությանը և տրված տարբերակներից ընտրեք համապատասխան պատասխանը:*

*Որոշ հարցերի պատասխանելը կհեշտացնեք, տվյալները՝ արտահայտելով գծագրի կամ դիագրամի ձևով:*

### **14. Տրված է.**

- Եթե Թինիկոն կիրակի օրը գնա Գուդաուրի, նա կկորցնի օպերայի թատրոնում պրեմիերային ներկա գտնվելու հնարավորությունը :
- Եթե Թինիկոն կիրակի օրը Գուդաուրի չգնա, նա կկորցնի հաճելիորեն արևակիզվելու հնարավորությունը :

*Ենթադրենք, որ այս նախադասությունները ճիշտ են, ապա ստորև թվարկածներից ո՞ր դրույթն է անպայման սխալ:*

- (ա) Թինիկոն չի կորցնի օպերային թատրոնում պրեմիերային ներկա գտնվելու հնարավորությունը.
- (բ) Թինիկոն չի կորցնի հաճելիորեն արևակիզվելու հնարավորությունը.
- (գ) Թինիկոն չի կորցնի կամ օպերային թատրոնում պրեմիերային ներկա գտնվելու կամ հաճելիորեն արևակիզվելու հնարավորությունը.
- (դ) Թինիկոն չի կորցնի ոչ օպերային թատրոնում պրեմիերային ներկա գտնվելու և ոչ էլ հաճելիորեն արևակիզվելու հնարավորությունը:

### **15. Դիցուք.**

- Ամեն նկարիչ ճարտարապետ է:

*Այդ դեպքում ստորև թվարկածներից ինչպիսի՞ մարդու գոյությունն է անհնար:*  
Մարդը, որը՝

- (ա) և նկարիչ է և ճարտարապետ
- (բ) նկարիչ է, թերևս ճարտարապետ չէ
- (գ) նկարիչ չէ, սակայն ճարտարապետ է
- (դ) ոչ նկարիչ է և ոչ էլ ճարտարապետ:

**16.** Արկղում խառը լցված առարկաներից Էկան աչքերը փակ վերցնում էր մեկը և դիտելուց հետո կրկին վերադարձնում էր արկղի մեջ: Այս գործողությունը նա բազմաթիվ անգամ կրկնեց: Պարզվեց, որ **արկղից վերցված բոլոր առարկաները կարմիր խաղալիք էր:**

*Այստեղից բխում է, որ արկղում.*

- (ա) միայն կարմիր խաղալիքներ են:
- (բ) միայն կարմիր առարկաներ են:
- (գ) միայն խաղալիքներ են:
- (դ) առարկաների մի մասը այնուամենայնիվ կարմիր խաղալիքներ են:

**17. Տրված է երկու դրույթ.**

- Եթե լավ չես ճանաչում գիշատիչ կենդանիների վարքի առանձնահատկությունները, Քենյան առյուծների դիտելու չես գնա:
- Եթե Քենյան առյուծներ դիտելու գնաս, GEO ամսագրում հոդված տպագրել չեն մերժի:

Արեցին եզրակացություն.

**Եթե GEO-ամսագրում հոդվածի տպագրումը մերժեցին, ինչպես երևում է, չես եղել Քենյանում առյուծներ դիտելու:**

Այս եզրակացությունը՝

- (ա) բխում է երկու դրույթներից և չի բխում ոչ մեկից առանձին-առանձին:
- (բ) բխում է յուրաքանչյուր դրույթից առանձին-առանձին
- (գ) բխում է միայն մեկ դրույթից
- (դ) չի բխում տրված դրույթներից

**18. Երաժշտության սիրահարները ջազային երաժշտության մրցույթում հաղթանակը կանխագուշակում էին B երաժշտին, սակայն, ի զարմանս նրանց, մրցույթում հաղթեց D երաժիշտը: Երաժշտության սիրահարները այս փաստը բացատրեցին D-ի նկատմամբ մրցատյանի անդամների կողմնակալ վերաբերմունքով:**

*Մտորն թվարկածներից n-րն է կասկածի տակ դնում երաժշտասերների այս ենթադրությունը:*

- (ա) B-ն իր կատարողական տեխնիկան ավելի լավ է դրսևորում սիմֆոնիկ երաժշտություն կատարելիս
- (բ) մրցատյանի անդամներից շատերն էին D-ի գործընկերը և բարեկամը
- (գ) B-ն առանձնահատուկ ջանասիրությամբ էր պատրաստվում այս մրցույթին
- (դ) մրցատյանի նախագահը ջազային երաժշտության նկատմամբ առանձնահատուկ համակրանքով էր տոգորված:

**Ընթերցած տեքստի վերախմաստավորում**

*Ուշադրությամբ ընթերցեք և ըմբռնեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:*

Մտածողության ունակությունը, սովորաբար միայն մարդուն բնութագրական յուրահատկություն են համարում և դրան կապում են խոսելու ունակությունը: Մտածողության դրսևորման ավարտված ձևը տրամաբանական մտածողությունն է: Բնականաբար հարց է ծագում. սա մտածողության միակ ձևն է, թե գոյություն ունեն նաև նրա այլ ձևեր: Ինչպես պարզվել է հետազոտություններից, գոյություն ունի մտածողության զարգացման մի քանը աստիճան: Յուրաքանչյուր աստիճանում մտածողությունը տարբեր ձևերով է դրսևորվում: Դրանցից ամենապարզը, այսպես կոչված, գործնական մտածողությունն է: .

Գործնական մտածողության հասկացությունը մտցրել է գերմանացի գիտնական Վ.Կելերը: Կելերը ուսումնասիրում էր. կարո՞ղ է, թե ոչ կենդանին ( որը զուրկ է խոսելու ունակությունից) իրականացնել բանական վարք, այսինքն՝ վարք, որը պայմանավորված չէ բնագորով: Կելերի կողմից մարդանման կապիկների վրա անցկացված փորձաքննությունների հիմնական սկզբունքը այսպիսին էր. երբ նպատակին կարելի է հասնել ուղիղ ճանապարհով, ապա կենդանու վարքը վարում է բնագոր: Մակայն եթե նպատակին հասնելու ոչուղիղ, «շրջանցիկ ուղի» է պետք, այդ դեպքում կենդանին հարկադրված է, այսպես կոչված բանական վարք իրականացնել: Կելերի բոլոր փորձերը այնպես են կառուցված, որ նպատակին հասնելու համար կենդանին, անպայման պետք է ընտրի շրջանցիկ ճանապարհը:

Կելերը նկարագրում է, թե ինչպես Կոկո շիմպանզեն հասավ պատի վերևում կախված ադամաթփին՝ բանանին: Երբ Կոկոն տեսավ ադամաթուզը, ուղիղ մղվեց նրա կողմը, ամբողջ ուժով ցատկեց, բայց նպատակին չկարողացավ հասնել: Ապա նա ետ վերադարձավ, կրկին վերադարձավ պատի մոտ և մի քանի անգամ կրկնեց այս վարմունքը: Այնուհետև մոտեցավ այնտեղ դրված արկղին, վրան կանգնեց և նայեց ադամաթփի ուղղությամբ: Կոկոյի շարժումներում ակնհայտորեն նկատվում էր դանդաղում: Նա մի քանի անգամ անցավ արկղից մինչև պատը ընկած տարածությունը: Փորձարկողը ադամաթփին նարնջի կտոր ավելացրեց, ինչը բացահայտորեն ազդեց կապիկի վարքի վրա: Կոկոն կրկին մոտեցավ արկղին, արագորեն այն տարավ պատի մոտ, թռավ վրան և հասավ մրգին:

Շիմպանզեի վարքում կարող ենք հայտնաբերել մտածողության բոլոր նշանները. ադամաթուզը նկատելը պայմանավորում է նրա՝ ուղիղ ճանապարհով (թռչելով) ձեռքը զցելու փորձը - կենդանու մոտ, նախ և առաջ արթնանում է բնագոր: Մակայն քանի որ նպատակին չի հասնում, Կոկոն սկսում է այս կողմ - այն կողմ քայլել: Երբ Կոկոն ադամաթփից հեռանում է և արկղի կողմն է գնում, նա գործում է բնագորին հակառակ, այսինքն՝ սկսում է մտածել: Նրա շարժումներում նկատվում է դանդաղում, ստեղծվում է տպավորություն, կարծես կենդանու մոտ զարմանալու սպեցիֆիկ զգացում է առաջանում: Զարմանալու զգացումով սկսված գործընթացը ավարտվում է մտածողությանը հատկանշական երկրորդ ապրումով՝ կռահումով. նարնջի կտորը ավելացնելուն պես կրկին արկղին մոտենալը և արդեն նպատակադրված վարքի իրականացումը այն է ցույց տալիս, որ Կոկոն հանկարծ «գլխի ընկավ», թե ինչպես կարելի է հասնել նպատակին: Կենդանու մտածողության ընթացքի ինչպիսին լինելը նրա վարքում, շարժումներում է երևում: Վարքը այստեղ ոչ թե մտածողության արտադրանք է, այլ նրա գործընթացն է: Այսպիսով, մտածողությունը դեռևս պրակտիկայից առանձնացված չէ:

Ուշագրավ է մեկ փաստ. քանի դեռ պատին միայն ադամաթուզ էր կախված, Կոկոն չունեք բավականին խթան խնդիրը լուծելու համար: Նարնջի կտորի ավելացումը, այսինքն՝ խթանի նշանակության աճը, նպատակին հասնելու պահանջմունքի ուժեղացում և համապատասխան վարք պայմանավորեց: Դա պարզորոշ ցույց է տալիս, ինչ նշանակություն ունի պահանջը մտածողության խթանման համար: .

**19.** Ստորև թվարկածներից որտե՞ղ է արտացոլված I պարբերության հիմնական իմաստը:

- (ա) մտածողության ավարտված ձևը միայն մարդուն է բնութագրական, քանզի միայն նա ունի խոսելու ունակություն,
- (բ) տրամաբանական մտածողությունը միայն մարդու համար է սպեցիֆիկ, թերևս, մտածողության այլ ձևերը հնարավոր է բնութագրական են նաև այլ շնչավոր էակների
- (գ) մտածողությունը զարգացման տարբեր աստիճաններին տարբեր ձևերով է ի հայտ գալիս, որոնց շրջանում ավարտվածը տրամաբանական մտածողությունն է
- (դ) մտածողությունը մշտապես զարգանում է և, համապատասխանաբար, այն տարբեր ձևերով է դրսևորվում, թերևս մարդուն բնութագրական է միայն տրամաբանական մտածողությունը

**20.** Ստորև թվարկածներից ո՞ր նախադասության մեջ է արտացոլված Կելերի հիպոթեզը, որի հաստատման դեպքում կարող ենք քննարկել կենդանիների մեջ գործնական մտածողության առկայության մասին:

- (ա) կենդանին, որը զրկված է խոսելու ունակությունից, չի կարող իրականացնել բանական վարք, այսինքն՝ վարք, որը պայմանավորված չէ բնագրով,
- (բ) ե՞րբ կենդանին նպատակին կարող է հասնել ուղիղ ճանապարհով, նրա վարքը կառավարում է բնագրը,
- (գ) ե՞րբ կենդանին նպատակին կարողանում է հասնել ոչ ուղիղ ճանապարհով, ապա նա իրականացնում է ոչ թե բնագրային, այլ բանական վարք,
- (դ) կենդանին, ո՞րը հարկադրված է նպատակին հասնելու համար անպայման «շրջանցիկ ճանապարհ» ընտրել, իրականացնում է ոչ թե բանական, այլ բնագրային վարք

**21.** Ի՞նչ հարաբերակցություն է I, II և III պարբերությունների միջև:

- (ա) I պարբերությունում արտահայտված է ենթադրություն, II-ում բերված են փաստարկներ այս ենթադրության օգտին, III-ում փորձնականորեն հիմնավորված է նրա ճիշտ լինելը
- (բ) I պարբերությունում առաջադրված է հարց, II-ում ներկայացված է այս հարցի ուսումնասիրման մոտեցումներից մեկը, III-ում բերված են այս մոտեցման հիման վրա անցկացված հետազոտության արդյունքները
- (գ) I պարբերությունում խոսվում է որոշակի երևույթի մասին, II-ում տրված են այս երևույթի գոյությունը հաստատող փաստեր, III-ում քննարկված է դրա հետազոտման արդյունքները
- (դ) I արտահայտված է որոշակի կարծիք, II-ում կասկածի տակ է առնված դրա ճշմարտացիությունը, III -ում տրված են այս կարծիքը ժխտող փորձնական տվյալներ

**22.** Ջարմանքը դիտվում է մտածողության հիմնական բնութագրիչներից մեկը: Կոկոյի օրինակի համաձայն, ի՞նչ նախադրյալներ են անհրաժեշտ այս ապրումը առաջացնելու համար.

- (ա) Որոշակի պահանջմունքի առաջացում, դրա բավարարման համար սովորական վարքի անհաջողություն
- (բ) խթանի նշանակության ավելացում և նպատակահարմար վարքի իրականացման անհնարինություն
- (գ) ցանկալի նպատակ և դրան հասնելու համար անհրաժեշտ «շրջանցիկ ճանապարհի» գոյություն
- (դ) ուժեղ բնագրի արթնացում և համապատասխան պահանջմունքի առաջացում

**23.** Ստորև թվարկածներից որի՞ մեջ է արտացոլված Կոկոյի կողմից կիրառված շրջանցիկ ուղին.

- (ա) ադամաթուզը պատին այնպես բարձր էր կախված, որ Կոկոյին հարկ եղավ մի քանի անգամ ողջ ուժով վերև թռչել, ինչը անհաջող հայտնվեց
- (բ) մրգին հասնելու համար, Կոկոյին հարկ եղավ արկղը մոտեցնել պատին, որի վրա ադամաթուզ էր կախված
- (գ) պատից, որ վրա ադամաթուզ էր կախված, արկղը մի քանի մետրով հեռացված էր, այնպես որ Կոկոյին բազմիցս հարկ եղավ դրանց միջև եղած տարածությունը անցնել
- (դ) նարնջի կտորը ավելացնելու արդյունքում Կոկոն կարողացավ այն ուղին գտնել, որով հնարավոր դարձավ հիմնախնդիրը լուծել

**24.** Ստորև թվարկածներից ո՞րն է հաստատում տեքստի հեղինակի կարծիքը, որ շիմպանզեի «մտածողությունը դեռևս գործնականից բաժանված չէ».

- (ա) շիմպանզեի վարքում կարելի է հայտնաբերել մտածողության բոլոր նշանները. բնագրին հակառակ գործողություն, զարմանքի և գլխի ընկնելու ապրումների հայտնաբերում
- (բ) նպատակադրված վարքի իրականացումը այն է ցույց տալիս, որ Կոկոն հանկարծ «գլխի ընկավ», թե ինչպես կարելի է նպատակին հասնել
- (գ) գոյություն ունեցող իրավիճակի պարզաբանումը և համապատասխան վարքի իրականացումը մտածողության գործընթացի արդյունքում դարձավ հնարավոր
- (դ) շիմպանզեի մտածողության մասին վկայում է պատի և արկղի միջև քայլերը, շարժումները դանդաղեցնելը, խթանի ուժեղացման արդյունքում նրա ակտիվացումը

**25.** Ստորև թվարկածներից ո՞րն է ներկայացնում, այսպես կոչված, բանական վարքի իրականացման օրինակ:

- I վանդակում փակված ճագարը տեսնում է դրսում դրված կերը: Փորձելով վանդակից դուրս գալ՝ նա հրում է պատերը, թաթը կպչում է փականքին, դուռը բացվում է և ճագարը դուրս է գալիս
- II կատուն վանդակից տեսնում է խաղալիք մկանը, փորձում է թաթով հասնել նրան, սակայն անարդյունք: Այնուհետև նկատում է խաղալիքին կապված թելը և խաղալիքը թելով իր կողմն է քաշում
- III Վանդակում առաստաղից կախված է ադամաթոզով լի զանբյուղ: Շիմպանզեն բարձրանում է այնտեղ և եթ դարսված տախտակամածի վրա և զանբյուղից ադամաթուզ է վերցնում՝

- (ա) միայն I
- (բ) I և II
- (գ) միայն II
- (դ) II և III



**Համանմանություններ**

*Այս տեսակ հանձնարարություններում տրված է մուգ տառատեսակով առանձնացված երկու բառ, որոնց նշանակությունների միջև գոյություն ունի որոշակի փոխհարաբերակցություն: Դրանց երկայնքով տրված է բառ, որին պետք է համապատասխանեցնենք ենթադրական պատասխանների տարբերակներից մեկը այնպես, որ ստացված բառերի միջև հարաբերակցությունը լինի մզացված բառերի փոխհարաբերակցությանը նման (նմանօրինակ):*

**26. միամիտ . անվստահություն**

անողորմ .

- (ա) քաջություն
- (բ) խարդախություն
- (գ) թշնամություն
- (դ) կարեկցություն

**27. հետևում է . երկայնակի**

ցարուցրիվ .

- (ա) հերթականորեն
- (բ) շրջանաձև
- (գ) այս կողմ- այն կողմ
- (դ) առանձին-առանձին

**28. ծանոթացավ . մերձեցավ**

մթնեց .

- (ա) պայծառացավ
- (բ) լուսացավ
- (գ) երեկոյացավ
- (դ) գիշեր դարձավ

**29. քնքուշ . երեսպաշտ**

քննադատող .

- (ա) խիստ
- (բ) հեզնոդ
- (գ) համապատասխան
- (դ) օբյեկտիվ

**30. բառ . տերմին**

տարածք .

- (ա) տարածման տեղ
- (բ) տարածություն
- (գ) շրջակա միջավայր
- (դ) սահման

**31. սայիտակ արջ , պինզվին**

մանր քար .

- (ա) քարե ժայռ
- (բ) խեցի
- (գ) քարքարոտ գետափ
- (դ) կավ

## Նախադասության լրացում

*Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բացթողնված բառերը նախադասությունում նշված են զծերով: Մեկ գիծը երբեմն ի նկատի ունի մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի:*

*Ենթադրական պատասխանի յուրաքանչյուր տարբերակ բովանդակում է բառերի խումբ, որոնց մասերը միմյանցից շեղ զծերով (/) են անջատված: Ընտրեք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր բաժինը հերթականությամբ մտցնելով համապատասխան բացթողնված տեղերում, կտա իմաստային պարզորոշ նախադասություն:*

**32.** Պետությունները կապերը միմյանց միջև այն ժամանակ -----, երբ վտանգ են զգում: ----- կապերը ստեղծվում են ոչ թե ----- հայեցակարգից բխելով, քանզի ոչ թե պետությունների ----- է որոշում այլ պետությունների գործողությունները, այդ թվում կապերի ստեղծումը:

- (ա) են ստեղծում / չնայած դրան / վտանգի հավասարակշռության, այլ ուժերի հավասարակշռության / հզորությունը, այլ պետությունից բխող վտանգի ըմբռնումն
- (բ) չեն ստեղծվում / չնայած դրան / ուժերի հավասարակշռության, այլ վտանգի հավասարակշռության / կողմից եկող վտանգի ըմբռնում, այլն դրանց հզորացումն
- (գ) են ստեղծում / համապատասխան / ուժերի հավասարակշռության, այլ վտանգի հավասարակշռության / հզորությունը, այլ պետությունից բխող վտանգի ըմբռնում
- (դ) չեն ստեղծում / համապատասխանաբար / վտանգի հավասարակշռության, այլն ուժերի հավասարակշռության / հզորությունը, այլ պետությունից եկող վտանգի ըմբռնում

**33.** Մարդկության պատմությունը ցույց է տվել, որ ----- մշակույթ: -----, երբ մշակութային զարգացման մասին ենք խոսում, անպայման ի նկատի պետք է ունենանք ----- ազգի մշակութային կյանքը:

- (ա) գոյություն չունի բազմաթիվ / այդ պատճառով / բազմաթիվ տարբերվող
- (բ) գոյություն ունի միայն մեկ կոնկրետ / չնայած դրան / միայն որևէ մեկ
- (գ) գոյություն չունի միայն մեկ ունիվերսալ / այդ պատճառով / որևէ մեկ կոնկրետ
- (դ) գոյություն ունի բազմաթիվ / չնայած դրան / բազմաթիվ տարբերվող

**34.** Գետը ցամաքի տարբեր մասերը միմյանցից բաժանում է: Էլ ավելի է բաժանում դրանց ծովը և այդ պատճառով ընտելացած ենք ջուրը դիտել որպես բաժանող գործոն: ----- ոչինչ այնպես -----: Բաժանողը միայն -----: Օրինակ, Միջերկրական ծովը միայն այն պատճառով ----- անտիկ աշխարհի կենտրոն դառնալ, որովհետև -----:

- (ա) թերևս / մերձեցնող չի մարդկանց համար, ինչպես ջուրը / լեռներն են / կարողացավ / այն ծով է եղել
- (բ) թերևս / հեռացնող չի մարդկանց համար, ինչպես ջուրը / լեռներն են / չէր կարող / այն ծով է եղել
- (գ) դրա հետ միասին / մոտեցնող չէ մարդկանց համար, ինչպես ցամաքը / ջուր է / կարողացել / բազմաթիվ կղզիներ էր կապում մայրցամաքային Հունաստանի հետ
- (դ) դրա հետ միասին / հեռացնող չէ մարդկանց համար, ինչպես ցամաքը / ջուրն է / չի կարողացել / բազմաթիվ կղզիներ կապում էր մայրցամաքային Հունաստանի հետ

**35.** ----- բազմաթիվ մարդկանց միևնույն բնական պայմաններում է հարկ լինում ապրել, նրանց հոգևոր աշխարհը ----- տպավորությունների պատճառով միմյանց ----- հետաքրքրություններից է սնվում: ----- ինչպես օրենք, միմյանց ներքնաշխարհը ըմբռնելու ----- :

- (ա) Քանի որ / միևնույն / մերձենում է, նման / այս հոգևոր միասնությունը / հիմք է դառնում
- (բ) Չնայած այն բանին, որ / տարբերվող / հակադրվում է, փոխադարձաբար հակառակ / այս հոգևոր հակադրությունը / հնարավորություն է ստեղծում
- (գ) Չնայած այն բանին, որ / միևնույն / բարեկամանում է, նման / այս հոգևոր միասնությունը / հիմք է դառնում
- (դ) Քանի որ / տարբերվող / հակադրվում է, փոխադարձաբար հակադիր / այս հոգևոր հակադրությունը / հնարավորությունը բացառում է

**36.** Մեզ համար ----- կարևոր, ----- այսօր, երբ ----- , հետաքրքիրը ճիշտ այն է, թե ինչպես էին առաջացնում այդպիսի ներշնչանք ----- :

- (ա) այն բանի պարզաբանումն է / հավատում են, թե ոչ մուսաների գոյությանը բանաստեղծները / մեր առջև դրված չէ մուսաների գոյություն ունենալ- չունենալու հարցը / միանգամայն իրատեսական էակներ
- (բ) այն բանի դատում չէ / առաջացնում են, թե ոչ ներշնչանք մուսաները / մեր առջև դրված է արվեստում դրանց նշանակության հարցը / գոյություն չունեցող էությունները
- (գ) այն բանի պարզաբանումն է / առաջացնում են, թե ոչ ներշնչանք մուսաները / մեր առջև դրված չէ արվեստում դրանց նշանակության հարցը / միանգամայն իրատեսական էակներ
- (դ) այն բանի դատումը չէ / գոյություն ունեն, թե ոչ մուսաներ / գիտենք դրանց գոյություն չունենալու մասին / գոյություն չունեցող էությունները

**37.** Երբ դատում են մեծամասնության և փոքրամասնության մասին , միևնույն խմբի անդամների ----- անհատի վրա նրանց ազդեցության ձևերը ----- : Մեծամասնությունը ----- մղում է անձին, ----- փոքրամասնությունը ----- , ինչը պայմանավորում է անձնական փոփոխություններ:

- (ա) են ենթադրում, ճիշտ այդ պատճառով / նման են / հաստատված նորմերին հնազանդվելու կողմն է / և համանմանորեն / նոր և ոչստանդարտային որոշումների կողմը
- (բ) չեն ենթադրում, ճիշտ այդ պատճառով / տարբեր են / նոր և ոչստանդարտային որոշումների կողմն է / և համանմանորեն, / օրիգինալ և ստեղծագործական մտածողության կողմը
- (գ) չեն ենթադրում, թերևս / նման են / սոցիալական ճնշման աղբյուր է և զիջումների կողմն է / իսկ / մտածելու և դատելու կողմը
- (դ) են ենթադրում, թերևս / տարբեր են / սոցիալական ճնշման աղբյուր է և զիջումների կողմն է / իսկ / մտածելու և դատելու կողմը

**Տրամաբանություն**

Այս հանձնարարությունները միմյանցից տարբերվում են նախնական տվյալների և կատարվելիք որոշումների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրեք հարցերին, որոնք կցված են յուրաքանչյուր հանձնարարությանը և տրված տարբերակներից ընտրեք համապատասխան պատասխանը:

Որոշ հարցերի պատասխանելը կհեշտացնեք, տվյալները՝ արտահայտելով գծագրի կամ դիագրամի ձևով:

**38.** Տրված է՝

- Ճիշտ չէ, որ ծաղիկը, որը այս ծաղկամանում կբացվի, փշոտ է և եռագույն:

*Եթե այս դրույթը ճշմարիտ է, ապա ստորև թվարկածներից ո՞րն է անպայման ճշմարիտ*

- (ա) այս ծաղիկը փշոտ չէ, թերևս եռագույն է
- (բ) այս ծաղիկը փշոտ է, թերևս եռագույն չէ
- (գ) այս ծաղիկը կամ առանց փուշ է, կամ եռագույն չէ, կամ երկուսն էլ միասին
- (դ) այս ծաղիկը կամ առանց փուշ է, կամ եռագույն չէ, սակայն ոչ երկուսը միասին

**39.** Մայրը երեխաների համար ծննդյան նվերներ պատրաստեց. նկարչական ալբոմ, հեքիաթների գիրք և տիկնիկ:

- Թաթա. «Երանի նկարչական ալբոմը ինձ հասնի»:
- Ռուսուդան. «Ես չեմ ուզում, որ ինձ ընկնի նկարչական ալբոմ»:
- Լիզի. «Ես չեմ ուզում, որ հեքիաթների գիրքը ինձ հասնի»:

*Նվերները այնպես բաշխվեցին, որ միայն մեկի ցանկությունը կատարվեց: Ինչպե՞ս բաշխվեցին նվերները աղջիկների միջև:*

Թաթա	Ռուսուդան	Լիզի
(ա) նկարչական ալբոմ	հեքիաթների գիրք	տիկնիկ
(բ) նկարչական ալբոմ	տիկնիկ	հեքիաթների գիրք
(գ) տիկնիկ	հեքիաթների գիրք	նկարչական ալբոմ
(դ) հեքիաթների գիրք	նկարչական ալբոմ	տիկնիկ

**40.** Դպրոցում երկու 11-րդ դասարան է՝ A և B: Ստուգողը, որը ծանոթանում էր դպրոցի աշխատանքին, նկատեց, որ քիմիայից A դասարանի աշակերտները ավելի բարձր գնահատականներ ունեն, քան B դասարանի աշակերտները: Այս փաստի հիման վրա նա ենթադրեց, որ **A դասարանի աշակերտները, B դասարանի աշակերտների համեմատությամբ, քիմիան ավելի ջանասիրությամբ են սովորում:**

*Ստորև թվարկածներից ո՞ր փաստն է այս ենթադրության **համոզիչ լինելը ավելացնում:***

- (ա) B դասարանի քիմիայի ուսուցիչը ավելի խիստ քննող է, քան A դասարանինը,
- (բ) A դասարանի քիմիայի ուսուցիչը ավելի ինտենսիվորեն է կիրառում ուսուցման ժամանակակից մեթոդները, քան B դասարանինը
- (գ) A դասարանի աշակերտները քիմիայի լաբորատորիայում գործնական աշխատանքի հնարավորություն պակաս ունենին, քան B դասարանի սովորողները
- (դ) B դասարանի դասացուցակում պակաս ժամեր է տրված քիմիային, քան A դասարանի դասացուցակում

41. Պետությունում պլանավորում են փողը փոխել և պետք է վճովի, քանիցենտանոց մետաղադրամներ պատրաստել: Մետաղադրամները պետք է պատրաստվեն հետևյալ պայմանի պահպանությամբ.

- եթե չի պատրաստվի չորսցենտանոց, կամ չի պատրաստվի հինգ ցենտանոց մետաղադրամ, ապա երկուցենտանոց մետաղադրամ էլ չպետք է պատրաստվի:

*Մտորն թվարկածներից ո՞ր դեպքում է խախտվել այս պայմանը:*

Պատրաստվեցին հետևյալ արժեքի մետաղադրամներ .

(ա) 1, 3, 4

(բ) 1, 2, 5

(գ) 2, 4, 5,

(դ) 3, 4, 5

42. Տրված է՝

- Եթե սոխակին որևէ բան հաճույք է պատճառում, նա լավ է դայլայլում:
- Սոխակին մեծ հաճույք է պատճառում, երբ աստղեր է տեսնում:

*Մտորն թվարկածներից ո՞ր դրույթն է բխում այս նախադասություններից.*

(ա) եթե սոխակը լավ չի դայլայլում, նա աստղեր չի տեսնում

(բ) եթե սոխակը լավ է դայլայլում, նա աստղեր է տեսնում

(գ) եթե սոխակը աստղեր չի տեսնում, լավ չի դայլայլում

(դ) եթե սոխակը լավ է դայլայլում, նրան ինչ-որ բան հաճույք է պատճառում:

## **Ընթերցած տեքստի վերախմաստավորում**

*Ուշադրությամբ ընթերցեք և ըմբռնեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:*

Միջերկրական ծովի ջրավազանը աշխարհի քաղաքակրթության առաջացման հիմնական տարածաշրջաններից մեկն է: Այստեղ կարող ենք առանձնացնել քաղաքակրթության զարգացման երեք գլխավոր մոդելներ. միջագետքային (այսինքն՝ մեսոպոտամական), եգիպտական և էգեյան-հելենական:

**Մեսոպոտամական** մոդելը սկիզբ է առնում շումմերական քաղաքակրթությունում: Շումմերները ոչ միայն առաջին հայտնաբերողներն էին բազմաթիվ ոլորտներում, այլև ստեղծողները քաղաքակրթության այն նորմատիվային տարրերի, գրեթե անփոփոխ որ փոխանցվում էր հին արևելյան մեկ մշակույթից մյուսին: Այս քաղաքակրթությունում ստեղծվեց մեխերով գրության համակարգը, ինչպես նաև դիցաբանական կերպարների և պոեմների «բանկը», որը նախնական տեսքով տարածվեց առաջավոր Ասիայի ժողովուրդների շրջանում: Մեսոպոտամյան շրջանի մշակույթների համար առանձնահատուկ է այն, որ մարդը չի որոնում ինչ օրինաչափություն է կանգնած յուրաքանչյուր երևույթի ետևում. նա ճանաչում է աստվածային կամքը:

**Եգիպտական** մոդելը էականորեն զարգանում է մեկ ազգի և մեկ տարածաշրջանի շրջանակներում: Ուրիշներից սահմանագատվելու ցանկությունը Եգիպտոսում առաջացրեց մտածողության այն ոճը, որը այլ ժողովուրդները համար հաճախ անհասանելի էր մնում: Դա արտահայտվեց նախ և առաջ եգիպտական գրությունում, որը երբեք չի դուրս եկել երկրի սահմաններից: Եգիպտոսը ոչ թե անձնական նախաձեռնությունների զարգացման ճանապարհով գնաց, ինչը այնպես բնութագրական էր մեծ բուրգերի դարաշրջանի հին թագավորության համար, այլ անհատին լրիվությամբ ենթարկեց կոլեկտիվի հետաքրքրություններին: Եգիպտական արվեստում զարգացում չգտավ ոչ հին թագավորությանը բնութագրական ապրելու զարմանալի սերը, ոչ էլ անցումային ժամանակաշրջանում դրսևորված կյանքի էության մասին փիլիսոփայական մտքերի տարրերը: Այստեղ զարգացավ մաթեմատիկական, աստղագիտությունը, բժշկությունը, թերևս իրատեսության ըմբռնումը այնուամենայնիվ մնում էր կանխազգացումային, ինտուիցիոն, առասպելական: Կարելի է խոսել որոշ գրական ժանրերի մետապոտամյան կամ եգիպտական համարժեքների մասին, սակայն դրանք չեն գտել անկախություն, ինչը առաջացնում է անհատական հեղինակներ (դա միայն մասամբ վերաբերում է արվեստի այլ ճյուղերի):

**Էգեյան-հունական** մոդելի գլխավոր յուրահատկությունը հին արևելյան քաղաքակրթություններին բնութագրական դիցա-պոետական և նոր, սեփական հելլենական գիտակցությանը հատկանշական քննադատական մտածողության զարմանալի բարեխառնումն է: Հույները եգիպտացիներից ստացան սեփական առանձնահատկության զգացումը, ինչը արտահայտվեց հայտնի հակադրությունում. Հելլեն - բարբարոսը, թերևս հարևան երկրների հետ նրանց ինտենսիվ կապերին ուղեկցում էր «մետապոտամական անկաշկանդվածությունը»: Հելլենը ստեղծեց ամենահռչակավոր առասպելները, թերևս ինքն էլ կատարեց առաջինը այն քայլը, որը նշանավորում էր առասպելաբանական մտածողությունը փիլիսոփայականով փոխարինում: Հնարավոր է հելլեններին բնութագրական մրցույթների, այսինքն՝ հոգեվարքային խոյանքն էլ արագացրեց հունական քաղաքակրթության զարգացումը: ,...

Էգեյան-հունական քաղաքակրթության ձևավորման մեջ մեծ դեր կատարեց աշխարհի ճանաչման գործընթացում քննադատական ինքնագիտակցության ուժեղացումը, գրության նոր, արագ տարածման համակարգի ընդունումը, պոլիսը՝ որպես հասարակական կազմակերպության նոր և ճկուն ձևը: Անձի ասպարեզում հանդես գալը ամենապարզ երևաց պոլիսների քաղաքական կյանքում: Հունական պոլիսները ձևավորվեցին որպես փոքր պետական միավորներ, թերևս գոյություն ունեին նաև հելլենական միասնության զարմանալի զգացում: Հելլենական մշակույթը ընդգրկեց համարյա ողջ Միջերկրական ծովի տարածքը: Պոլիսի ազատ քաղաքացին ղեկավարվում է՝ իր իսկ մասնակցությամբ ստեղծված, մշտապես կատարելագործման գործընթացում գտնվող օրենքներով և միաժամանակ ավելի ու ավելի էր ազատվում արդեն մշակված նորմերից: Ուշագրավ է նաև պատմական գործոնը. հույները հայտնվեցին էգեյան մշակույթի ժառանգորդներ: Նրանք յուրացրեցին նախահունական (էգեյան) մշակույթի ավանդույթները, որոնք զարգացման բազմաթիվ գաղտնագիր էր պարունակում:

**43.** Մեսոպոտամյան շրջանի մշակույթների ներկայացուցիչներին բնութագրական է այն, որ՝

- (ա) նրանք ստեղծեցին քաղաքակրթության նորմատիվային տարրեր, որոնք անփոփոխ փոխանցվում էին Միջերկրական ծովի ջրավազանի բոլոր քաղաքակրթություններին,
- (բ) նրանց համար կարևոր չէր այն բանը գիտենալ, թե բնության որ օրենքով է բացատրվում այս կամ այն երևույթը, հետևաբար չէին առաջադրում «ինչպես» հարցը,
